ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1918-1920 ԹԹ. *

ՀՏԴ 94(479)+327.5

Վանիկ Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
Հայոց պատմության ամբիոն, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
vanik.virabyan@mail.ru

1918-20-ական թվականներին Ադրբեջանի ռազմաքաղաքական քայլերն ուղղված էին հայկական պետական համակարգի խարխլմանը: Այդ մտադրությամբ անգլիացի զորավարներ Թոմսոնի և Շատելվորտի օգնությամբ դուրս բերվեցին Անդրանիկի և Դրոյի զորքերը: Սա թույլ է տվել ադրբեջանական իշխանություններին 1919 թ. օգոստոսի 22-ին Ղարաբաղի հայկական խորհուրդը ժամանակավորապես ենթարկել ադրբեջանական կառավարությանը, մինչև այդ վիճելի հարցի լուծումը դաշնակիցների կողմից Փարիզի խաղաղության կոնֆերանսի ժամանակ, ինչն ադրբեջանական կառավարության նախապես ծրագրված խորամանկ քայլերից էր:

Իրականում, Հայաստանի Հանրապետությունում հետագա կարևոր ռազմաքաղաքական փոփոխությունների արդյունքում և Ռուսաստանի ու Թուրքիայի միջև փոխշահավետ համաձայնության արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով դաշնակից ուժերի ակնհայտ թողտվությունը, 1920-21 թթ. Ադրբեջանին հաջողվեց գրավել ոչ միայն Նախիջևանը, այլև՝ Ղարաբաղը և հայկական այլ հողերը, որոնց համար պայքարը վերսկսվեց 1988 -1990-2020-ական թվականներին:

Բանալի բառեր՝ *Հայաստանի Հանրապետություն, Ղարաբաղ-Արցախ, Ադրբեջան, Ռուսաստան, Անգլիա-Մեծ Բրիտանիա, Բաքու:*

Ներածություն

Արցախի համար 1918-1920 թթ. ծավալված ադրբեջանա-հայկական հակամարտությունը եղել է անզիջում և արյունոտ: Ադրբեջանական տարաբնույթ ոտնձգություններից և հակահայկական գործողություններից պատնեշվելու համար ՀՀ կառավարությունը մի շարք քայլեր ձեռնարկեց[1]: Դեռ 1918 թ. նոյեմբերի 16-ին Նախարարների

---

* Հոդվածը ներկայացվել է 01.04.2022:
Տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Ս. Պողոսյանը: 11.04.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 11.04.2022:
[1] Հետազոտությունը տպագրվում է ՀՀ Գիտության Պետական Կոմիտեի Թեմատիկ Հայտի (21T-6A102. «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական

խորհրդում լսվում է Զինվորական նախարարի զեկուցագիրը Ղարաբաղի և Զանգեզուրի համար զինվորական ուժեր կազմակերպելու մասին: Նկատի ունենալով, որ Ադրբեջանը չսպասելով Ղարաբաղի և Զանգեզուրի սահմանների վիճարկելի հարցերի փոխադարձ համաձայնությամբ լուծմանը, անցել է գործողությունների, և բռնագրավելով Արցախ-Ղարաբաղի ու Զանգեզուրի լեռնային մասերը, ազգաբնակչության վերաբերմամբ գործադրում է բռնություններ՝ որոշվում է կազմակերպել զինված ուժեր այդ շրջանների պահպանության և ազգաբնակչությանը ոտնձգություններից պաշտպանելու համար[1]: Հիմք ընդունելով ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 16-ի նիստի որոշումը և հենվելով 1919 թ. հունիսի 5-ի օրենքի վրա՝ կառավարության կողմից ընդունվում է նոր օրենք Ղարաբաղի զորամաս կազմակերպելու համար՝ հատկացնելով 1.500 հազար ռուբլի՝ 8 միլիոնանոց ղարաբաղյան ֆոնդից: Ըստ օրենքի՝ Ղարաբաղի զորամասը պետք է բաղկացած լիներ մի հետևակ գումարտակից, երկու լեռնային թնդանոթից և 54 հետախույզներից[2]: Սակայն այս ամենը բավարար չափով արդյունավետ չեղավ, ՀՀ կառավարությունն էլ կուլ գնաց Դաշնակիցների ներկայացուցչությունների փարիսեցիական սնամեջ հավաստիացումներին: Ադրբեջանն էլ օգտվեց բրիտանա-եվրոպական ռազմաքաղաքական ներկայացուցչությունների թողտվությունից և աջակցությունից, որից ՀՀ կառավարությունն անակնկալի եկավ:

Հայկական սպասելիքներ և Բրիտանական խաբկանք

Ստեղծված իրավիճակում Անդրկովկասում բրիտանական գերագույն հրամանատար Զ. Ֆորեստիեր-Ուոքըրին մարտի 9-ից փոխարինած Վ. Մ. Թոմսոնը[3], վերջինիս շտաբային սպաներից մեկը՝ Դ. Ի. Շատելվորտը, որ թողնվել էր Բաքվում որպես կայսերական զինված ուժերի պետ[4], բացահայտ սիրաշահում էին Ադրբեջանին և սկզբանե անհանդուրժողամիտ էին հայերի նկատմամբ և ադրբեջանցիների նկատմամբ անսքող համակրանք էին տածում: Գեներալ Վ. Թոմսոնի միջամտությամբ էլ 1918 թ. նոյեմբերին կանխվեց զորավար Անդրանիկի զորաջոկատի մուտքը Շուշի և Արցախ, որի իրագործումը կեղծվում է Ադրբեջանի պատմաբանների կողմից: Այդ մասին է գրում նաև Թ. դե Վաալը. «Գեներալ Ուիլյամ Թոմսոնը, որը գլխավորում էր էքսպեդիցիոն կորպուսը, Ղարաբաղում հայերի շրջանում ծայրահեղ հեղինակություն չվայելող նահանգապետ-ադրբեջանցու՝ դոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովին նշանակեց և «համոզեց» հայկական պարտիզանական ջոկատների հրամանատար Անդրանիկին վերադառնալ Հայաստան: Թոմսոնը ասել էր, որ դա ընդամենը ժամանակավոր

ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների համատեքստում (1917-1920 թթ.)» շրջանակում:

[1] Հայաստանի Ազգային արխիվ (այնուհետև՝ ՀԱԱ), ֆ. 199, g. 1, գ. 6, թ. 9:

[2] ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 28, թ. 86-87:

[3] Թոմսոն Վիլյամ Մոնտհոմերի (2 դեկտեմբերի, 1878 -23 հուլիսի,1963 թթ.) - գեներալ-մայոր, 1918 թ. նոյեմբերի 17-ից մինչև 1919 թ. մարտի 10-ը՝ 39-րդ դիվիզիայի հրամանատար, որին հաջորդում է Բաքվի նահանգապետ դառնալը:

[4] Շատելվորտ Դիգբի Ինգլիս (- 23 օգոստոսի, 1876-15 մայիսի, 1948) – Բրիգադային գեներալ,1917-1919 թթ. եղել է 39-րդ հետևակային բրիգադի հրամանատարը Կովկասում, 1919 թ. ապրիլ-օգոստոսին զբաղվել է բրիտանական զորքերի դուրսբերմամբ Անդրկովկասից: https://military-history.fandom. Com /wiki/ Digby_Shuttleworth: https:// peoplepill.com/people/digby-shuttleworth: Isgenderli A., 2011, 184-185: «Азербайджан», 1919, 24 августа. № 179: Азербайджанская Демократическая Республика, 1998, 279:

պայմանավորվածություն է և մնացած բոլոր հարցերը կվճռվեն առաջիկա Փարիզի Խաղաղության վեհաժողովում»[1]:

Պատմագիտական կեղծիքներ: Ղարաբաղյան հարցի շահարկում

Ըստ ադրբեջանցի պատմաբան Զ. Հասանլիի, Թոմսոնը Ֆ. Խան-Խոյսկու գլխավորած կոալիցիոն կառավարությունը համարել է միակ իրավաբանական անձը ադրբեջանական բոլոր տարածքների համար՝ խոստանալով դաշնակիցների հրամանատարության լիիրավ աջակցությունը[2], ադրբեջանական պետության ղեկավարներին ցինիկաբար հասկացնելով, որ ինքը «հայերի ջատագովը» չէ[3]:

Թոմսոնի կերպարը բացասաբար է ընդունվում որպես մի բրիտանացու, որի շնորհիվ դե-ֆակտո ընդունելի է դարձել Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի տիրապետությունը, որի հակառակորդները՝ եվրոպական և առանձնապես ադրբեջանցի հեղինակները պատճառաբանում են, թե Թոմսոնն ընդամենը ձգտել է կայունության, քան հայատյացության, որ իբր թե դրանով Ղարաբաղի նկատմամբ հսկողության պահպանումն Ադրբեջանի կողմից կնպաստեր կայունությանը և խաղաղությանը տարածաշրջանում: Այդ առումով Ֆ. Սիմեդովան գրում է, թե Թոմսոնն իբր թե Լոնդոն ուղարկված մի հեռագրում անգամ գրել է, թե հարկ է հայերին հանձնել Արևելյան Թուրքիայում գտնվող տարածքները[4], ինչը փաստերին չի համապատասխանում և կառուցված է կեղծ պնդումների վրա. «Առաջին անգամ միջազգային հանրությունը պարտադրել է Հայաստանին դուրս բերել հայկական զինված ուժերն Արցախից կամ էլ տեղաբաշխել նոր ուժեր. օրինակ՝ հայտնի է, որ Արևմտյան Անդրկովկասում դաշնային զորքերի հրամանատար, բրիտանական գեներալ Վիլյամ Թոմսոնը, 1918 թ. դեկտեմբերի 2-ին ներկայիս Բերդաձոր գյուղի տարածքում գլխավոր հրամանատար Անդրանիկին նամակ հանձնեց»[5]: Նամակում Թոմսոնը Անդրանիկին կոչ արեց առաջ չշարժվել, չմտնել Լեռնային Ղարաբաղ, քանի որ մոտ ժամանակում Փարիզի վեհաժողովում պետք է քննարկվեր Հարավային Կովկասի նոր կազմավորված պետությունների սահմանների հարցը: Ակնարկը պարզ էր, որ անհրաժեշտություն չկա ստեղծել ոչ անհարկի բարդություններ: Եվ առանց դրա էլ Արցախը կարող էր լինել հայկական, քանի որ այն բնակեցված էր բացառապես հայերով /շատ կարևոր փաստ -Վ.Վ/»[6]:

***Սակայն Ադրբեջանը, չնայած իր ամբիցիաներին և լկտիությանը, այդպես էլ չկարողացավ լիակատար հսկողություն հաստատել (effective control) Լեռնային Ղարաբաղի նկատմամբ նույնիսկ Թուրքիայի աջակցությամբ**, ինչը սակայն 2020 թ. իրողություն դարձավ: Թուրքիան անպատժելիորեն գործեց և ավելի արդյունավետ: Ինչպես 1918-1920 թթ. Թուրքիան իր թիկունքին զգաց ՀՀ դաշնակիցներ համարված Անտանտի երկրների Հայաստանից օտարվածությունը: Թիֆլիսում տեղակայված 27-րդ զորա-*

---

[1] Ваал де Т., 2005, 181:
[2] Hasanli J., 2016,150:
[3] Hasanli J., 2016, 278:
[4] Ахмедова Ф., 2009, 174:
[5] Նամակը Թոմսոնի անունից հանձնեցին 39-րդ բրիգադի Գլոսեսթերշայր գնդի 7-րդ գումարտակի վաշտի հրամանատար կապիտան Զ. Ֆ. Սքուայրը և 6-րդ հուսարական գնդի սպա, ֆրանսիական ռազմական առաքելության կցորդ կապիտան Նիկոլաս Գասֆիդը:
[6] Հովհաննիսյան Ռ., 2005, հատոր I, 94: Исторический цикл, 2011:

*բաժնի հրամանատար գեներալ-մայոր Ջ. Թ. Ֆորեստիեր-Ուոքըրը փետրվարի 19-ին տեղեկացնում է ՀՀ կառավարությանը, որ Դաշնակից խաղաղարարների կողմից հռչակված սկզբունքի համաձայն՝ «վիճելի տարածքի տիրապետումը զենքի ուժով լրջորեն կվնասի նախահարձակի հավակնություններին, որ բոլորը պետք է սպասեն Հաշտության վեհաժողովի որոշմանը»: Փետրվարի 24-ին Երևանում Ֆորեստիեր-Ուոքըրի ներկայացուցիչ, բրիգադային գեներալ Վերնի Ասսերը, որը Երևանում բրիտանական զինվորական ներկայացուցիչն է եղել փետրվարի 1-ից մինչև մարտի սկիզբը, արտգործնախարար Ս. Տիգրանյանին է հանձնում Թոմսոնի կողմից ուղարկված մի պաշտոնական հաղորդագրություն, ըստ որի՝ Դոկտոր Սուլթանովը Շուշի էր գնում իբրև Զանգեզուրի, Շուշիի և Ղարաբաղի շրջանների ընդհանուր նահանգապետ՝ առանց որևէ պահանջ դնելու Ադրբեջանի ապագա վարչության վերաբերյալ, նշված տարածքներում միայն օրենքը և կարգը պահպանելու համար[1]: Տիգրանյանը, Ֆորեստիեր-Ուոքըրի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ ՀՀ կառավարությունը գեներալ Թոմսոնի հեռագիրը չի կարող համարել իբրև արտահայտություն Զանգեզուրի և Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի իշխանության անուղղակի ճանաչման, թեկուզ ժամանակավոր գերիշխանության իրավունքի ձևով այն վիճելի շրջանների վրա, որոնք պետք է ենթարկվեն Սուլթանովի իշխանությանը: Տիգրանյանը միակ ընդունելին համարեց **status quo**-ի պահպանումը մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը սահմանների մասին, մատնացույց անելով Դաշնակիցների փետրվարի 19-ի հայտարարագիրը, թե արդյո՞ք «զենքի ուժով նվաճված վիճելի տարածքի տիրապետությանը» վերաբերող հայտարարությունը նույն կերպ ուղարկվե՞լ է Բաքվի կառավարությանը»[2]:*

1919 թ. մարտի 11-ին Ս. Տիգրանյանը դիմում է գեներալ Թոմսոնին, գտնելով, որ Խաղաղության վեհաժողովի հրահանգները կոտնահարվեն, եթե Ադրբեջանը միակողմանի գործողություններ ձեռնարկի, հիշեցնելով, որ պատերազմի ընթացքում Ղարաբաղն իր ազատությունը պաշտպանել է համառորեն և այժմ իրեն դիտում է որպես Հայաստանի մաս, որ Ադրբեջանի կողմից իր կամքը պարտադրելու ամեն մի բռնի փորձ, անկասկած, ամենալուրջ հետևանքների կհասցնի, ըստ այդմ՝ «այսպես կոչված ընդհանուր նահանգապետի» մասին Թոմսոնի առաջարկը համարելով անընդունելի[3]: Հայությունն ապշած էր բրիտանական այդպիսի հովանավորությունից: 1919 թ. մարտի 27-ին վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի հետ տեսակցման ժամանակ Թոմսոնն ի պատասխան խնդրանքի՝ ադրբեջանական զորքերը Ղարաբաղից դուրս բերելու և այն ժամանակավորապես անգլիական վարչության ներքո պահելու վերաբերյալ, կտրուկ հակադարձում է, ասելով, թե եթե Սուլթանովն անգամ ատելի է բոլորին, այդուհանդերձ, անհրաժեշտ է օգնել բրիտանական ջանքերում[4]:

Այս համատեքստում Ֆ. Ախմեդովան գրում է. «Չնայած այն հանգամանքին, որ հայկական կառավարությունը ձգտում էր ուժեղացնել ճնշումը Կովկասում Մեծ Բրիտանիայի զինված ուժերի ղեկավար կազմի վրա (Ուոքըր, Թոմսոն և ուրիշներ), նրանց բոլոր փորձերն անարդյունք դուրս եկան: Շատելվորտը գնալով Շուշի՝ հայերից պա-

---

[1] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, Հատոր I,177:
[2] Խատիսեան Ալ., 1968, 154:
[3] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, Հատոր I, 177-178:
[4] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, Հատոր I, 188:

հանջեց ենթարկվել Ադրբեջանի Հանրապետության կառավարությանը: Սակայն հայերը շարունակեցին իրենց անջատողական գործունեությունը: 1919 թ. ապրիլի վերջին անցկացված [5-րդ] համագումարում նրանք հրաժարվեցին ընդունել Ղարաբաղի գեներալ-նահանգապետի իշխանությունը: Այդպիսի որոշման մեջ մեծ դեստրուկտիվ դեր խաղաց Հայաստանի կառավարությունը և նրա ներկայացուցչությունը Լեռնային Ղարաբաղում: Առաջին անգամ միջազգային միջնորդները Կովկասում ծագած տարածքավեճերի օրինակով ձեռք բերեցին կարգավորման գործընթացներում մասնակցության փորձ: Հայտնի է հիմնականում Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ակտիվ մասնակցությունը: 1919 թ. մայիսի 5-ին գեներալ Թոմսոնը հայտարարեց, որ ինքը կարգադրել է անջատողականներին արտաքսել: Հունիսի 5-ին ծայրահեղ ռեակցիոն հայերն անգլիական հրամանատարության ներկայացուցիչների ուղեկցությամբ Շուշիից Թիֆլիս ուղարկվեցին: Հունիսի 6-ի միտինգում, որն անցկացվեց Շուշու այն մասում, որտեղ ապրում էին հայերը, հայերը հայտարարեցին, որ ճանաչում են Ադրբեջանի կառավարությունը: Հայերը, ընդունելով գեներալ-նահանգապետության գործողությունների սկզբունքները, սկսեցին բանակցել: 1919 թ. օգոստոսի 15-ին հայերը, Ադրբեջանի կառավարության հետ ստորագրելով համաձայնագիր, ընդունեցին, որ այն տարածքները, որոնցում հայեր են ապրում, հանդիսանում են Ադրբեջանի բաղկացուցիչ մասը: Ենթադրվում էր, որ ղարաբաղյան հայերին «մշակութային ինքնավարության» իրավունք կտրվի»[1]: Սիա այսպես, կեղծելով պատմական իրողությունները, ադրբեջանցի պատմագետները սուտը-կեղծիքն իրականության տեղ են հրամցնում:

1919 թ. ապրիլին Կովկասում Մեծ Բրիտանիայի առաքելության ղեկավար Թոմսոնին փոխարինում է գեներալ Շատելվորտը: Արցախի Ազգային Խորհրդի նախագահ Ե. Իշխանյանի գնահատմամբ՝ «Գեներալ Թոմսոնին յաջորդած գեներալ Շատելվորդը գերազանցեց իր նախորդին, աւելի ու աւելի մեզ զբաղեցնելով Սուլթանովի նահանգապետութեան, աւելի ճիշտ՝ Ադրբեջանի իշխանութիւնը ճանաչելու խնդրով: Միսիայի միջոցով աշխատում էր հաամոզել մեզ՝ ենթարկվել նահանգապետի կարգադրութիւններին»[2]: Շատելվորտն այնքան սանձարձակ գտնվեց, որ 1919 թ. ապրիլի վերջերին անձամբ ճանապարհվեց Գորիս՝ պահանջելու Խոսրով Բեկ Սուլթանովին ճանաչելու իբրև Ղարաբաղ-Զանգեզուրի ընդհանուր նահանգապետ, բայց հանդիպեց համառ դիմադրության, և ետ վերադարձավ՝ հայերի հասցեին ուղղված կշտամբանքներով, օդային ռմբահարման սպառնալիքով և պահանջելով, որ Ա. Շահմազյանը հրապարակայնորեն հեռացվի՝ ՀՀ կառավարությանը մեղադրելով վերջինիս գաղտնի ֆինանսավորման մեջ[3]: Շատելվորտը, որը Թոմսոնին իրազեկել էր Զանգեզուրում վերսկսված հայկական ընդդիմության մասին՝ ի դեմս Շահմազյանի և Երևանի հետ «կապված ուրիշ ««գործակալների», պնդել էր, որ դեպի Նախիջևան հայրենադարձությունը դադարեցվի՝ մինչև համագործակցությունը Երևանի և Զանգեզուրի միջև չդադարեցվի, որը զայրացրել էր նաև Թոմսոնին, որն էլ պարտադրեց դադարեցնել հայրենադարձությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով զինված ուժեր[4]:

Շատելվորտի հեռանալուց հետո Մուսավաթի հիմնադիր Ռասուլ-զադեն օգոստո-

---

[1] Ахмедова Ф., 2009,174-175:
[2] Իշխանեան Ե., 1999, 378:
[3] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, Հատոր I, 210:
[4] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, Հատոր I, 266:

սի 28-ին հայտարարեց, որ շուտով Ադրբեջանն առանց ընդհատվելու կծգվի Դաղստանից մինչև Զուլֆա և Արաքս գետը՝ հարավում[1], ըստ այդմ հավակնելով վաղուց ի վեր ծրագրված իրենց ռազմավարական նպատակադրումների իրագործմանը՝ վերահսկողության հաստատմանն Արաքսի հովտում, ինչպես և այսօր, երբ Ադրբեջանն ու Թուրքիան համառորեն ձգտում են Սյունիք-Զանգեզուրով ճանապարհ բացել դեպի Նախիջևան-Թուրքիա՝ ողջ Արաքսի հովիտն առնելով իրենց հավակնոտ պլանների մեջ և Հայաստանը մեկուսացնելով արտաքին աշխարհի հետ կապող բոլոր ուղիներից:

ՀՀ կառավարության ձեռնարկած քայլերը և ռազմավարական որոնումներն էական արդյունքներ չեն տալիս: Հայկական Ղարաբաղի անվտանգությունը շուտով էապես վտանգվում է: Անդրանիկին ու Դրոյին ռազմաքաղաքական իրադարձություններում մասնակցությունից մեկուսացնելուց հետո, մուսավաթական Ադրբեջանն անցնում է ճնշիչ բնույթի լայնածավալ գործողությունների Ղարաբաղի հայ բնակչության, նրա օրինական ազգային-պետական իրավունքների նկատմամբ՝ ոտնահարելով միջազգայնորեն ճանաչված էթնիկական խմբերի ինքնորոշման անքակտելի իրավունքը: Ադրբեջանը հավակնում էր ոչ միայն Արցախի և Զանգեզուրի, այլև՝ Շարուր-Նախիջևանի և անգամ Սևանա լճի ավազանի արևելյան և հյուսիսարևելյան շրջաններին: Ադրբեջանցի պատմաբան Բ. Նաջաֆովը ողջունում է Սուլթանովի գործողությունները Ղարաբաղում՝ գոհունակություն արտահայտելով անգլիական ռազմաքաղաքական իշխանությունների աջակցության կապակցությամբ. «Սակայն գեներալ-նահանգապետ Խոսրով Բեկ Սուլթանովի վստահ գործողությունները, որին այս անգամ լիովին աջակցեցին անգլիացիները, շատ արագ արդյունք տվեց. հանդարտությունը և կարգը վերականգնվեցին»[2]: Անդրադառնալով Ղարաբաղում տեղի ունեցած հունիսյան դեպքերին՝ Բ. Նաջաֆովն իր կանխակալ գնահատականն է հնչեցնում. «Դ-ր Սուլթանովը նշանակվեց գեներալ-նահանգապետ և բրիտանական սպան ու բրիտանական ոչ մեծ զորաջոկատը տեղաբաշխվեցին Շուշիում: Պայմանագրի համաձայն՝ Սուլթանովը պետք է արձակեր իր իսկ հրամանները միայն Անգլիայի ներկայացուցչի հետ համաձայնությամբ: Նույնիսկ այսպիսի կառավարումը 66 հայեր հրաժարվեցին ընդունել, և երբ ադրբեջանական հաղորդագրերը սոսնձվեցին քաղաքով մեկ, հայերը հրահրվելով քարոզիչների կողմից, փչացնում էին դրանք կամ պոկում»[3]:

Մեծ Բրիտանիայի գիտությամբ էր, որ 1919 թ. սկզբներին հայկական առաջխաղացումը կասեցվեց: 1919 թ. ապրիլի 3-ին Անտանտի հրամանատարության ներկայացուցիչ Շատելվորտը հայտարարում է, որ մինչև Ղարաբաղի հարցի վճռումը Փարիզի վեհաժողովի կողմից, շրջանը պետք է մնա Ադրբեջանի կազմում[4]: Անտեսելով ՀՀ կառավարության բողոքները գեներալ Շատելվորտը ապրիլի 3-ի հայտարարության մեջ շեշտում էր. «Անգլիացիների համար Ղարաբաղի, ինչպես նաև Զանգեզուրի ճակատագիրը որոշված է. նրանք վճռել էին այդ հողամասերը միացնել Ազրբեջանին: 1919 թվականի հունվարի 15-ին, Ազրբեջանի զոր. Թոմսոնի հավանությամբ, Ղարաբաղ-Զանգեզուրի ընդհանուր նահանգապետ նշանակեց դր. Խոսրով բեգ Սուլթանովին, որը հայե-

[1] «Նոր աշխատավոր», 1919, Թիֆլիս, 1 սեպտեմբերի:
[2] Наджафов Б., 1994, 66.
[3] Наджафов Б., 1994, 66-67.
[4] Пилипчук Яр. В., 2021,132, 136:

րի աչքին հայատյացի և ջարդարարի համբավ էր վայելում: Անգլիական հրամանատարութիւնը յայտարարում է ի գործադրութիւն Շուշի, Զանգեզուր, Ձիբրայիլ և Ձիվանշիր գաւառների բովանդակ ազգաբնակչութեան, որ՝ 1. Ադրբեջանի Հանրապետութեան կառավարութեան 1919 թ. հունւարի 15 որոշումով դր. Սուլթանովը նշանակւած է Շուշի, Զանգեզուր, Ձիբրայիլ և Ձիվանշիր գաւառների ընդհանուր-նահանգապետ և վայելում է անգլիական հրամանատարութեան աջակցութիւնը…2. Բոլոր վիճելի հարցերը իրենց վերջնական լուծումը կստանան Հաշտության վեհաժողովում: Պարզ ու կտրուկ. Ղարաբաղի հարցը միայն Ղարաբաղը Ազրբեջանին կցելու խնդիր չէ, այլև Զանգեզուրն ու Նախիջևանը Ազրբեջանին միացնելու:…Եվ իրոք, Ղարաբաղի հարցը «լուծելուց» հետո, Ազրբեջանը սկսեց տենդագին պատրաստություններ տեսնել Զանգեզուրն էլ «անվնաս դրության մեջ» դնելու համար»[1]:

Բրիտանական վճիռներ և հայկական խուսանավումներ

ՀՀ կառավարությունը նույն օրը արձագանքում է ապրիլի 3-ի պարտադրանքին, գտնելով, որ Ղարաբաղի վերաբերմամբ կարելի է խոսել հայ ազգաբնակության ներկայացուցչական օրգանների համաձայնությամբ[2], ինչն անարձագանք է մնում: Սուլթանովը դա համարեց նոր «դարաշրջան» Ղարաբաղի կյանքում: Միանգամայն իրավացի է Ս. Վրացյանը. «Նոր դարագլուխ, դժբախտաբար, չբացվեց, բայց Սուլթանովն իրավունք ուներ հպարտանալու, որովհետև, թեև ժամանակավոր կերպով, Ղարաբաղը դառնում էր Ադրբեջանի մաս: «Ժամանակավոր»-ը «մշտական» դարձնելը ապագայի հարց էր, և ազրբեջանցի գործիչները չէին հրաժարվում այդ մտքից»[3]:

Գեներալ Շատելվորտի գործուն աջակցությամբ Խ. Սուլթանովն իր իշխանությունն Արցախում և Զանգեզուրում հաստատելու նպատակով որդեգրում է մի նոր, այն է՝ հայությանը սիրաշահելու ու կեղծ խոստումներով ապակողմնորոշելու ու համոզելու մարտավարություն: Այն բանից հետո, երբ Ղարաբաղում բրիտանական զորքերի հրամանատարությունը Դ. Շատելվորտի անունից 1919 թ. ապրիլի 3-ին փաստացի հաստատագրեց գեներալ-նահանգապետ Խ. Սուլթանովին որպես միակ բարձրագույն իշխանություն՝ հայ բնակչությանը կոչ արվեց անվերապահորեն կատարել վերջինիս բոլոր հրամանները: Արցախահայությունը, բնավ ուշադրության չարժանացնելով Շատելվորտի սպառնալիքներն ու անհիմն պահանջները, 1919 թ. ապրիլի 23-ին Շուշիում գումարում է Արցախի Ազգային խորհրդի հերթական 5-րդ համագումարն ու վճռականորեն մերժում բրիտանական հրամանատարության ներկայացրած Ադրբեջանի իշխանությունն ընդունելու որոշումը՝ համակերպվելով դրան[4]: «Սուլթանովն էլ, - գրում է Ե. Իշխանյանը,-առանձին աշխատանք էր տանում հայերի հետ, ծանոթ թուրք վաճառականների միջոցով, որ հայերը յաճախեն նահանգապետին, մասնակցեն նահանգական գործերին, պաշտոններ ստանձնեն:… դոկտոր Սուլթանովը կարծում էր, թէ հայ պաշտոնեաներ ունենալով, կը կարողանայ գիւղացիութեան մէջ տրամադրութիւն ստեղծել՝ ճանաչելու Ադրբէջանի իշխանութիւնը»[5]: Հանդիպելով արցախահայության

---

[1] Վրացյան Ս., 1993, էջ 330-331, 342-343: ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս I, թ. 10-40հակ.
[2] ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 43, թ. 59:
[3] Վրացյան Ս., 1993, 341-342:
[4] Իշխանեան Ե., 1999, 393-406:
[5] Իշխանեան Ե., 1999, 378-379:

վճռական դիմադրությանը՝ Շատելվորտը ապրիլի 23-ին մեկնում է Շուշի, անձամբ պարտադրելու Արցախին ընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Զանգեզուր-Ղարաբաղի Շրջանային Խորհուրդը բնավ չերկյուղելով ու տեղիք չտալով Զանգեզուրի հայությանն ուղղված Շատելվորտի սպառնալիքներից՝ տալիս է կտրուկ պատասխան. «…մենք Ադրբեջանին հպատակվել չենք կարող, քոչը սար չի կարող բարձրանալ: Միայն մեր գավառի ավերակների ու ժողովրդի դիակների վրայով Ադրբեջանը կարող է տիրել Զանգեզուրին և իր հրամանները թելադրել»[1]: Կատարելով գեներալ Թոմսոնի հրահանգները, որը դեռ ապրիլի սկզբներին պաշտոնական այց էր կատարել Երևան և վարչապետ Ալ. Խատիսյանի ու արտգործնախարար Ս. Տիգրանյանի հետ ունեցած խորհրդակցությունում փորձել համոզել և պարտադրել իր այն առաջարկը, որ Ղարաբաղը չի կարող գոյատևել առանց պարենամթերք ներմուծելու Բաթում-Բաքու երկաթուղու Եվլախ կայարանից, Շատելվորտը դարաբաղցիներին Սուլթանովի ռեժիմը պարտադրելու համար չխորշեց սպառնալ տնտեսական փաստարկներով, որ հակառակ դեպքում Լեռնային Ղարաբաղը սովի կմատնվի, եթե անջատվի արևելյան հարթավայրից և Բաթում-Թիֆլիս-Բաքու երկաթգծի վրա գտնվող Եվլախի երկաթուղային հանգույցից[2]: Գեներալ Շատելվորտը Ղարաբաղի հարցին լուծում տվեց բրիտանական քաղաքական ուղեգծի շրջանակներում՝ ամենևին ցանկություն չդրսևորելով ընդդիմանալ Ադրբեջանի նկրտումներին: Գեներալ Շատելվորտը Բաքու վերադարձավ 1919 թ. ապրիլի 26-ին, իսկ արդեն ապրիլի 29-ին Ադրբեջանի կառավարությանը լիազորեց կատարելու քաղաքական ձերբակալություններ և սահմանափակելու խոսքի ազատությունն ու հասարակական հավաքույթները: Շատելվորտն արտոնեց Ղարաբաղի տնտեսական բոյկոտն Ադրբեջանի կողմից՝ դիմելով հայերին սովահար անելու միջոցով հնազանդեցնելու քաղաքականությանը[3]: Ղարաբաղի վրա այս շատելվորտյան ճնշումը բրիտանական վարքագիծ էր, որը որոշակի հուսախաբություն առաջ բերեց. Շատելվորտի խորհրդով և հորդորներով գեներալ Թոմսոնը զգալի ճնշում գործադրեց ՀՀ կառավարության վրա, պահանջելով դադարեցնել Երևանից հարավ ընկած շրջանների փախստականների հայրենադարձությունն այնքան ժամանակ, քանի դեռ հայկական կառավարությունը հրապարակայնորեն չի հրաժարվի Զանգեզուրում և Ղարաբաղում գտնվող բոլոր խռովարարներից, որի պատժամիջոցները դադարեցվեցին վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի պատասխանը և Երևանում բրիտանական զինվորական ներկայացուցիչ գեներալ Ք. Մ. Դեյվիի զեկուցագրերը ստանալուց հետո[4]:

Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային Խորհրդի կտրուկ պատասխանը ստանալուց հետո գեներալ Շատելվորտն իր անգլիացի ու թուրք զինվորներից բաղկացած թիկնազորի ուղեկցությամբ հեռանում է Գորիսից, բայց շարունակում է քայլեր ձեռնարկել Զանգեզուրին պարտադրելու իր որոշումը: Հետաքրքիր է ադրբեջանցի պատմաբանների եզրահանգումը ԱԴՀ կառավարության վարած քաղաքական կուրսի մասին. «1919 թ. ապրիլի սկզբին Փարիզում Անտանտի Գերագույն խորհուրդը տարածաշրջանից բրիտանական զորքերի դուրսբերման մասին որոշում ընդունեց: Հարկ է ընդու-

---

[1] «Հայաստանի աշխատավոր», 1919, Երեւան, 17 յուլիսի:
[2] Վրացեան Ս., 1958, 285: Սարուր [Ասուր], 1929, «Հայրենիք» ամսագիր, հ. VIII, Հունիս, 128-146:
[3] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, Հատոր I, 187-188:
[4] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, Հատոր I, 190:

նել, որ ադրբեջանական կառավարությունն ի սկզբանե դեմ եղավ անգլիական զորքերի դուրսբերմանն Ադրբեջանից, քանզի վստահ չէր, որ կարող է պաշտպանել իրեն հյուսիսից եկող վտանգից, լիներ դա Դենիկինի բանակը կամ բոլշևիկները: ԱՂՀ Արտաքին գործերի նախարար Մ. Յու. Ջաֆարովը 1919 թ. ապրիլին անգլիական զորքերի հրամանատար Դ. Շատելվորտին ուղղված հեռագրում անկեղծացել էր. «Իմ կառավարության ունեցած պաշտոնական տեղեկությունների համաձայն անգլիական զորքերը օգոստոսի կեսերին թողնելու են Ադրբեջանի սահմանները: Այդ կապակցությամբ ադրբեջանական կառավարությունը որոշում է ընդունել խնդրել Նորին Բրիտանական Գերազանցությանը թողնել անգլիական զորքերն Ադրբեջանում: Ցանկանում եմ ավելացնել, որ պայմանները, որի համաձայն անգլիական զորքերը կարող են մնալ Ադրբեջանի սահմաններում, կարող են մշակվել համատեղ համաձայնությամբ»[1]:

1919 թ. մայիսի 8-ին գեներալ Թոմսոնն իր մոտ է հրավիրում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանին ու հայտնում, որ համաձայն գեներալ Շատելվորտի ու գնդապետ Մոնկ-Մեսսոնի զեկուցագրերի, Ղարաբաղում, ինչպես նաև Գորիսում ու Զանգեզուրի գավառում իրավիճակն ու կարգը խանգարվում է հիմնականում կապիտան Շահմազյանի ագրեսիվ քաղաքականության հետևանքով: Թոմսոնի պնդմամբ, չգիտես՝ ինչու, իրեն Ղարաբաղում գեներալ-նահանգապետ հռչակած կապիտան Շահմազյանը, հիմք ունենալով ՀՀ կառավարության հանձնարարականը, տեղի բնակչությանը ներարկում է Ադրբեջանի իշխանություններին չենթարկվելու գաղափարը՝ Ղարաբաղը համարելով Հայաստանի անբաժանելի մաս[2]:

Իսկ Ադրբեջանի գլխավոր զենքը հայության դեմ դարձավ գեներալ Թոմսոնին հաջորդած Բաքվի անգլիական զորքերի հրամանատար Շատելվորտը, որի միջոցով ադրբեջանցի մուսավաթականներն ամեն ինչ արեցին արցախցիներին պարտադրելու Ադրբեջանի իշխանությունը: Շատելվորտի և մյուսների գործունեության հակահայկական ուղղվածության մասին տեղին է Լեոյի աքսիոմատիկ եզրահանգումը. «Մուսավաթը գիտեր, թե ինչ է անում, իսկ անգլիական հրամանատարությունն էլ զուր չէր նրա մտերիմ, հոգեկից բարեկամը: Թոմսոնին հաջորդած գեներալ Շատելվորտը համառությամբ մերժում է բոլոր ...պահանջները /ղարաբաղցիների-Վ.Վ./, Սուլթանովի գործակատարն է հանդիսանում, անձամբ գնում է Շուշի՝ համագումարին ներկա լինելու համար և Սուլթանովի ճանաչումը պահանջելու համար»[3]:

Պատմաքաղաքական այդ վայրիվերումների ընթացքում եղան նաև վտանգավոր շրջադարձեր, քաղաքական սայթաքումներ և խոտորումներ. 1919 թ. օգոստոսի 12-ին կայացած Ղարաբաղի 7-րդ համագումարը, քննելով ստեղծված դրությունը և համոզվելով, որ դրսից ոչ մի շոշափելի օգնություն չի կարող ստանալ, անգլիացիներն էլ ըստ էության պաշտպանում են ադրբեջանցիներին, իր հերթին Հայաստանի կառավարությունն էլ ի վիճակի չէ որևիցե լուրջ ռազմաքաղաքական աջակցություն և իրական օգնություն հասցնելու, ծանր ու թեթև անելով սեփական հնարավորությունները, որոշեց օգոստոսի 15-ին ընդունել Բաքվի հետ համաձայնությունը, ինչի արդյունքում ստորագրվում է 1919 թ. օգոստոսի 22-ի հայտնի տխրահռչակ համաձայնագիրը:

---

[1] Азербайджанская Демократическая Республика, 1998, 309-310.
[2] «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, 17 ապրիլի:
[3] Լեո, 2009, 388:

Ադրբեջանն էլ ամեն տեսակի որոգայթ լարեց՝ կոտրելու ղարաբաղցիների դիմադրական ոգին, և ի վերջո Խոսրով բեկ Սուլթանովին հաջողվում է խաբեությամբ և նենգաբար պարտադրել 1919 թ. օգոստոսի 22-ի իրավակարգը, որի համաձայն Արցախը պարտավորվում էր ժամանակավորապես ենթարկվել Ադրբեջանին՝ մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշումը, որի հայանպաստ որոշման մեջ, ցավոք սրտի, Հայաստանի Կառավարությունը ոչ մի կասկած չուներ, ինչն էլ, ըստ էության, հայկական կողմի քաղաքական սխալ հաշվարկների արդյունք էր, և վերջին հաշվով՝ ծանր պարտություն Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական հակամարտությունում, որին մեծապես նպաստեց նաև Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատարության ադրբեջանամետ դիրքորոշումը: Այդ կապակցությամբ էլ Ռ. Հովհաննիսյանը շատ դիպուկ նկատում է. «1919 թ. օգոստոսի 22-ի կարգավորումն անձնական հաղթանակ էր Խոսրով բեկ Սուլթանովի և ազգային հաղթանակ Ադրբեջանի համար: Ղարաբաղը, ի վերջո ենթարկվեց Ադրբեջանի ժամանակավոր կառավարմանը: Իսկ ժամանակավոր կառավարումը մի ազդու և խոշոր քայլ էր դեպի մշտական տիրապետություն: Ինչ մարտավարություն էլ ընդուներ ապագայում Հայաստանի Հանրապետությունը, նրան այլևս չէր հաջողվելու ստիպել Ադրբեջանին հեռանալու այդ հայաբնակ լեռնաշխարհից: Բացի իր կպչուն համառությունից, Ադրբեջանն օգտվեց բրիտանական հրամանատարների հովանավորությունից, Փարիզի Հաշտության վեհաժողովի հապաղումներից՝ վիճելի տարածքի նկատմամբ գործնական միջոցներ ձեռք առնելու հարցում և հայկական կառավարության ընդհանուր անկարողությունից: Այն ամենը, ինչ մնաց հայերին, լոկ Ղարաբաղի ինքնավարության խոստումն էր և գոհունակությունը, որ Զանգեզուրը, այնուամենայնիվ, չմտցվեց ընդհանուր հանրապետության մեջ»[1]:

Արդյունքում, դոկտոր Խոսրով-բեկ Փաշաբեկ օղլի Բեկ-Սուլթանովի[2] մուսավաթական վարչակազմը կարողանում է 1919 թ. օգոստոսի 22-ի տխրահռչակ պայմանագրով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը պարտադրել իր կամքը՝ ժամանակավորապես ընդունել Ադրբեջանի իշխանությունը և դրանով իսկ արմատապես վտանգում ՀՀ շահերը, ինչը շատ մեծ և կոպիտ քաղաքական սխալ հաշվարկ էր, որն իր հետագա հոլովույթն ունեցավ Անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովի արդյունքներում[3]:

Հայաստանը, ամրապնդվելով Զանգեզուրում, չկարողացավ հաստատվել Ղարաբաղում՝ կրելով ցավալի պարտություն, ինչին էապես նպաստեցին անգլիական իշխանություններն իրենց ադրբեջանամետ քաղաքականությամբ, որոնք իրենց երկդիմի կիսամիջոցային բնույթի քաղաքական վճիռներով խոչընդոտեցին հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա լարվածության թուլացմանը և ստատուս-քվոյի հաստատմանը, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության ոչ հեռանկարային ու ոչ հաշվենկատ ռազմավարությունը, որը լիովին խարսխված էր Անտանտի երկրների Փարիզյան վեհաժողովից ակնկալվող արդյունքների վրա: Սկզբում Ղարաբաղից խաբեությամբ հե-

---

[1] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, հատոր I, 205:

[2] Սուլթանով Խոսրով բեկ Փաշա բեկ օղլի (10 մայիսի, 1879 - 7 հունվարի, 1943)- 1917 թ. մտել է «Մուսավաթ»-ի մեջ, 1919 թ. փետրվարի 12-ից հանդիսացել է Ղարաբաղի գեներալ-նահանգապետը, 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացմամբ տարագրվել է Թուրքիա: Векилов Р.А., 1998, 29.

[3] Վիրաբյան Վ., 2004, 4-42:

ռացվում են Անդրանիկի և Դրոյի զորամասերը, ադրբեջանցիների դեմ մի շարք հաղթանակներ տարած Արսեն Պավելի Շահմազյանը[1]: Էապես թուլանում են հայկական դիրքերն Արցախում[2]: Այդ ընթացքում՝ օգոստոսի 15-ին սկսվում է բրիտանական զորքերի դուրսբերումը Բաքվից: Օգոստոսի 18-ին փենջաբցիների 84-րդ զորախումբը կանգ է առնում Եվլախում, որպեսզի իր հետ վերցնի հազարապետ Ռիջինալդ Թայլերի ջոկատը, որ երկու օր առաջ փակել էր Շուշիի բրիտանական առաքելությունը և Ղարաբաղի հայերին թողել էր, որ հաշտվեն ադրբեջանցիների հետ, օգոստոսի 23-ին փակվում է Շատելվորտի կենտրոնակայանը, որի պատվին օգոստոսի 24-ին ճոխ ճաշկերույթ է կազմակերպվում[3]:

Այս առումով կարևոր է նշել նաև, որ դեռ 1919 թ. նոյեմբերի վերջին Թիֆլիսում տեղի ունեցած հայ-ադրբեջանական կոնֆերանսում նախագահող Դաշնակցային Գերագույն կոմիսար Վ. Հասկելի տեղակալ գնդապետ Ջ. Ռեյը կարևոր հայտարարությամբ է հանդես գալիս, և կեղծելով իրական փաստերը, պնդում, որ իր տեղեկությունների համաձայն Սուլթանովն անգլիացիների կողմից նշանակվել է ժամանակավորապես՝ գերմանացիների և թուրքերի էվակուացիայի ժամանակահատվածի համար, որ իբր Սուլթանովն ավելի ուշ ետ է կանչվել բրիտանացիների կողմից, որից հետո մեկնել Բաքու և կրկին վերադարձել Շուշի, սակայն արդեն իբր առանց բրիտանացիների կողմից լիազորությունների: Ռեյը, կեղծելով իրողությունները, ավելի է խորը գնում, պնդելով, թե բրիտանացիներն արդեն պատրաստվում էին Ղարաբաղ ուղարկել իրենց զորքերը, երբ պարզվում է, որ այնտեղ պետք է ժամանեն իտալացիները, որոնք պետք է զբաղեցնեին Շուշին, սակայն իտալացիները չեկան, բրիտանացիներն էլ պատրաստություն տեսան կրկին ուղևորվել այնտեղ, սակայն կարգադրություն եկավ նրանց ընդհանուր տարհանման մասին Բաթումիով, և դոկտոր Սուլթանովը մնաց այնտեղ, արդեն առանց բրիտանական լիազորագրի: Կոնֆերանսի ժամանակ, հերքելով գնդապետ Ջ. Ռեյի պնդումը, Ուսուբբեկովը հայտարարում է. «Այդ ամենը, կապված բրիտանացիների կողմից Սուլթանովի ետկանչման հետ, ինձ համար բացարձակ նորություն է հանդիսանում, քանի որ Սուլթանովը բրիտանացիների կողմից չի նշանակված: Նա նշանակվել է ադրբեջանական կառավարության կողմից բրիտանացիների համաձայնությամբ: Ես շատ երկար զրույց եմ ունեցել գեներալ Կորիի հետ նրա մեկնումից առաջ և գեներալ Կորին լիովին համաձայնվեց այն բանի հետ, որ նա պետք է և այնուհետև ևս շարունակի մնալ Ղարաբաղում»[4]:

1920 թ. փետրվարին ադրբեջանական բանակի զգալի մասը՝ մոտ 10000 հոգի, հավաքվեց Ղարաբաղի ճակատում[5]: Ղարաբաղցիք ևս, դրսից որոշակի օգնություն ստանալով, փորձեցին դիմադրել այդ պլանների իրագործմանը: Փետրվարի 19-ին Սուլթանովը պահանջեց՝ Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի մաս: Ղարաբաղցիներն իրենց համագումարներում մերժեցին այդ անօրինական պահանջը: Ղարաբաղի հայերն ապստամբեցին՝ պաշտպանվելով ադրբեջանական վայրագություններից, կոտորածների քաղաքականությունից: Հետևանքները, ինչպես նշում է Ս. Վրացյանը, կա-

---

[1] Շահմազյան Ա. Պ. [1883 -1937 թթ.]- ՀՀ զինվորական հայտնի գործիչ:
[2] Հովհաննիսյան Ռ. Գ., 2005, h. I,169-215:
[3] Հովհաննիսյան Ռ., 2014, հատոր II, 151:
[4] Туманян М., 2012,. 248-249:
[5] Վրացյան Ս., 2005, Հատոր I, 394 -395:

րող էին լինել շատ ավելի աղետավոր, եթե ապրիլի 13-ին Ղարաբաղ չհասներ Դրոյի էքսպեդիցիոն զորամասը: Նա իր ձեռքը վերցրեց շրջանի իշխանությունը, ապրիլի 15-ին զորահավաք հայտարարեց Կարանդայում ու Դիզակում, ամրացրեց ճակատները և 45 օր մնաց Ղարաբաղում: Ապրիլի 22-ին Թաղավարդ գյուղում հրավիրվեց Ղարաբաղի 9-րդ համագումարը, որը 44 ձայնով մեկի դեմ մի անգամ ևս որոշեց մերժել Ադրբեջանի իշխանությունը և Արցախ-Ղարաբաղը համարել Հայաստանի մաս[1]:

Ղարաբաղյան հարցի հանգուցալուծման փորձ 1920 թ. ապրիլին

1920 թ. ապրիլին Թիֆլիսում հրավիրված Անդրկովկասի հանրապետությունների վեհաժողովում ոչ մի հիմնարար որոշում չընդունվեց, սակայն տեղի ունեցան որոշ «տեղաշարժեր», որոնք կրկին հուսադրեցին հայերին, բթացրին սթափ մտածելակերպը և վերահաստատեցին բրիտանա-ֆրանսիական դաշնակիցների նկատմամբ կույր նվիրվածությունը: 1920 թ. հունվարին Հայաստանը դե-ֆակտո ճանաչվեց մեծ տերությունների կողմից, սահմաններում տիրեց համեմատական խաղաղություն, հաջողվեց հանդարտեցնել Զանգիբասարի, Կարս-Աղբաբայի, Զոդ-Բասարգեչարի և այլ մարզերի մահմեդականների ընդվզումները: Սակայն դա ոչ կայուն անդորր էր աղետալի զարգացումների նախօրեին, որը թուլացրեց զգոնությունը ներքուստ կուտակված տագնապների ընկալման նկատմամբ: Անդրկովկասում բրիտանական ռազմաքաղաքական առաքելությունը սկսել էր իրականացնել մուսուլմանների նկատմամբ հնարավոր բոլոր տեսակի զիջումների քաղաքականություն, որի մասին էր շեշտում ՀՀ Արտգործնախարարության քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը 1919 թ. սեպտեմբերի 16-ին Թիֆլիսում հայկական դիվանագիտական հավատարմատարին ուղղված պաշտոնագրում. «Փարիզի մեր պատվիրակության գրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ և վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն. թե՛ Տոմսոնի, թե՛ մյուս գեներալների (անգամ մեզ մոտ հայասեր համարված Անդրկովկասում բրիտանական օկուպացիոն զորքերի շտաբի քաղաքական բյուրոյի ղեկավար գեներալ Վ. Հ. Բիչի) զեկուցումները, մասնավորապես՝ Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում միշտ եղել են ի վնաս մեզ»[2]:

Արդյունքներ: Բրիտանական-դաշնակցային խաբկանքների ավարտ

Հայ ժողովուրդը, նրա քաղաքական առաջնորդները դաշնակիցների Կովկաս ժամանելու պահին կարծում էին, որ Առաջին աշխարհամարտում Դաշնակիցների հաղթանակն իրենց հաղթանակն է, որ Կովկասում հայկական շահերը գերակայություն կստանան: ՀՀ առաջին Զինվորական նախարար Հովհ. Հախվերդյանը հիասթափված հիշում է, որ «Թոմսոնը չէր շտապում ժամանել Երևան, մինչդեռ Հայաստանի կառավարությունը՝ հատկապես սպասում էր նրան, արդարացիորեն ենթադրելով, որ հայ ժողովուրդը՝ որպես թշնամու դեմ մինչև վերջ պայքարած և դաշնակիցներին հավատարիմ մնացած, թվում է, ամենից շատ իրավունք ուներ դաշնակիցների կողմից հատուկ վերաբերմունքի: Մինիստրների խորհրդում գեն. Թոմսոնի հետ առաջին իսկ հանդիպ-

[1] Վրացյան Ս., 1993, 396:
[2] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 97, թ. 126:

*ման ժամանակ Քաջազնունին բացահայտ արտահայտեց դա: Թոմսոնը բավականին կտրուկ առարկեց, **թե իրենք ավելի կարևոր գործեր ունեն, քան ուղղակի համակրանք արտահայտելն է:** Բայց հետո, Քաջազնունուց լսելով կառավարության մոտակա ծրագրերի մասին, Թոմսոնը «կեղծ զայրույթը» փոխեց ողորմածության և հայտարարեց, որ ինքը հաճելիորեն զարմացած է կառավարության սթափ հայացքներից: Պետք է ասել, որ այդպիսի սթափ հայացքները վերաբերում են Հայաստանի գոյության առաջին շրջանին, Քաջազնունու վարչապետական ժամանակին: Հետագայում Հայաստանի արտաքին քաղաքականության թվացող հաջողությունների և Քաջազնունու հեռանալու հետ մեկտեղ, կուսակցության (նկատի ունի ՀՅԴ բյուրո-կառավարությանը-Վ.Վ.) տաք գլուխների կողմից ղեկավարվող կառավարության հայացքները և մտածողությունները դարձան առավել ագրեսիվ»[1], որը, սակայն ավելի շուտ կոշտ էր, քան՝ ագրեսիվ: Անդրկովկասում բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության վարքագիծը՝ ի դեմս գեներալ Վ. Թոմսոնի և Շատելվորտի, ավելի վրդովեցուցիչ, ընդգծված հայատյաց և հակահայկական էր Ադրբեջանի և Հայաստանի միջև իրենց իսկ կողմից արհեստականորեն վիճելի հռչակված Լեռնային Ղարաբաղի, Սյունիք-Զանգեզուրի և Նախիջևանի հարցում: Բացահայտորեն աջակցելով Ադրբեջանին՝ Թոմսոնը և նրա կողմնակիցներն ամեն ինչ արեցին Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին վերանեթարկեցնելու համար, կարևորելով բրիտանական նավթային շահերը և գլխավորապես Ռուսաստանի դեմ պատնեշ ստեղծելու կարծրատիպը, համոզված, որ պետք չի օգնել անուղղելի ռուսասեր համարվող հայերին: Դա կատարվում էր ցինիկ բացահայտությամբ, որը որոշ պահերի զարմացնում էր նույնիսկ հայերի մյուս դաշնակիցներին, որի մասին շատ հետաքրքիր դիտարկում կա Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ, իր լրտեսական գործունեությամբ[2] ընդդեմ Հայաստանի հայտնի Խան-Թեքինսկու մայիսի 20-ի զեկույցում. «**Ինձ մոտ ճաշի ժամանակ Հայաստանում Ֆրանսիայի ներկայացուցիչն իր դժգոհությունն արտահայտեց անգլիացիների քաղաքականությունից, որն ուղղված է բացառապես հօգուտ Ադրբեջանի և գլխավորապես Թոմսոնի քաղաքականությունից, որը ճարպիկ զեկույցներով հասավ Ղարաբաղն Ադրբեջանին հանձնելուն, ինչը ֆրանսիացիների կարծիքով անարդարություն է: Բացահայտորեն արտահայտեց ֆրանսիացիների համակրանքը հայերի նկատմամբ՝ անվանելով նրանց յուրային**»[3]: Ինչ վերաբերում է Ֆրանսիայի, Իտալիայի և այլ անհամեմատ ավելի փոքր կշիռ ունեցող երկրների ներկայացուցիչների արտահայտած համակրանքին, ապա դա այդպես էր և 2020 թ. հայ-ադրբեջանական պատերազմին, որի ժամանակ ևս գործը դեկլարատիվ համակրանքից և էմոցիայի տպավորիչ պոռթկումներից այն կողմ չգնաց, որ տարածքային վիճելի հարցերում նրանց ռազմավարությունները գրեթե նույնանման էին: Այսպիսով՝ չհաջողվեց քիչ թե շատ վերականգնել ՀՀ էթնիկական-տարածքային ամբողջականությունը, որից դուրս մնացին Ախալքալակ-Ջավախքը և Լոռու Զեզոք գոտին, Լեռնային Ղարաբաղը և Շարուր-Նախիջևանը: Այդ ամենը տեղի ունեցավ Դաշնակիցների և գերազանցապես բրիտանական ջանքերով ու թողտվությամբ, որոնք հոգ տարան մեծ և հզոր Ադրբեջան ստեղծելու մասին (ինչը կպատ-*

---

[1] ՀԱԱ, ֆ. 45, g. 1, q. 32, թ. 3-4:
[2] Virabyan V., 2021, № 1 (13), 51-81:
[3] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, q. 358, թ. 25:

նեշեր բոլշևիկյան Ռուսաստանից) և շահագրգիռ չեղան ուժեղ Հայաստանի հարցում, ընդհակառակը՝ մինչև վերջ անհիմն տրամադրեցին Հայաստանին ընդդեմ հյուսիսից եկող վտանգի, սակայն վտանգի պահին լքեցին և նրա շահերը ստորադասեցին Մ. Քեմալի խորհրդով բոլշևիկացած Ադրբեջանին: Բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչությունը, որոշ վերապահումներով հանդերձ միայն, խրախուսեց ՀՀ մահմեդական շրջանների անջատողական տրամադրությունները, որը խարխլեցին ՀՀ դիրքերը տարածաշրջանում՝ ահռելի նյութական և բարոյական վնաս պատճառելով, որը, տկարանալով, չկարողացավ դիմագրավել գալիք փորձություններին:

*Մեծ Բրիտանիայի մեկնումից հետո, հետևաբար, Խորհրդային Ռուսաստանը և վերակենդանացող Թուրքիան էին այն երկու պետությունները, որոնց հետ Հայաստանը չկարողացավ համաձայնության գալ: Հայաստանի և Թուրքիայի միջև Սևրի դաշնագրի ուրվականը կար, իսկ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կախվել էր խաբուսիկ հույսը դաշնակիցների օժանդակության հետ կապված, որոնք ինչպես նկատում են անգլիացի կովկասագետներ Դ. Մ. Լանգը և Ք. Ի. Ուոքքրը, հայ ժողովրդին և նրա առաջնորդներին կերակրում էին **«Սև ծովից մինչև Միջերկրական ծով տարածվող Հայաստան ստեղծելու երազային գաղափարով»**[1], որն էլ տարավ ՀՀ ճակատագրական մեկուսացմանը և անկմանը, իսկ իրավիճակն արդեն կտրուկ փոփոխությունների էր ենթարկվել. **«1920-ի ընթացքում աշխարհի իրավիճակն այնպիսի դրամատիկ փոփոխություններ կրեց, որ այլևս իմաստազրկվեցին դաշնակից տերությունների Հայաստանին տված խոստումները...բուռն վիճաբանություններից հետո... դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ինչպես առածն է ասում, նրանք գերադասեցին «կարմիր լինել, քան մեռած»**[2]: 1920 թ. գարնանն իրավիճակը սրընթաց փոխվում է, արցախցիների ազատագրական պայքարին ադրբեջանաթուրքական միացյալ զինյալ ուժերը պատասխանում են զանգվածային կոտորածներով՝ 1920 թ. մարտի 22-26-ին կազմակերպելով Շուշիի հայության կոտորածը: Բոլշևիկացած Ադրբեջանի Հեղկոմն էլ մի վերջնագիր է հղում Երևանի կառավարությանը, որով պատերազմ էր հայտարարում, եթե հայկական զորքերը մինչև ապրիլի 30-ը չդատարկեին Ադրբեջանի «անվիճելի հողամասերը»: Իսկ արդեն 1921 թ. հուլիսի 5-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշմամբ, Ի. Ստալինի ճնշման ներքո, հայկական Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին, կոպտորեն խախտելով նախորդ օրը՝ դեռ 1921 թ. հուլիսի 4-ին կայացրած վճիռը հօգուտ այն բանի, որ Ղարաբաղ-Արցախը մտնի Խորհրդային Հայաստանի կազմի մեջ՝ նենգափոխելով ազգերի ազատ ինքնորոշման լենինյան-բոլշևիկյան գաղափարադրույթը:*

Եզրակացություն

Այս առումով որոշ վերապահումներով դիտարկելի է Կանադայի Կալգարիի համալսարանի Կովկասի գծով ռազմավարական հետազոտությունների կենտրոնի մասնագետ, քաղաքագիտության և պատմության պրոֆեսոր է. Անդերսենի և Վրաստանի տեխնիկական համալսարանի և պետական համալսարանի գիտաշխատող, քարտեզագիր-պատմաբան Գ. Պարտխալածեի տեսակետը. «Հայաստանի քաղաքական դե-

[1] Լանգ Դ. Մ., Ուոքքր Ք. Ջ., 1992, 31:
[2] Լանգ Դ. Մ., Ուոքքր Ք. Ջ., 1992, 32:

*կավարության միամտությունն արտահայտվեց և հարավկովկասյան հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացման մեջ...Եվ այստեղ Հայաստանի առաջնորդները ենթադրության եկան, որ ծագած տարածքային բախումները մեծ տերությունների կողմից կլուծվեն իրենց օգտին՝ որպես հատուցում և շնորհակալություն հայկական ջանքերի համար պատերազմի ժամանակ և ըստ այդմ՝ հրաժարվեցին հարևանների հետ դրանք բանակցությունների միջոցով լուծելուց: Այդպիսի մոտեցման արդյունքում 1918 թ. վերջին Վրաստանի հետ Հայաստանի տեղի ունեցած ռազմական բախումը զգալի վնաս հասցրեց երկուսին էլ, իսկ Հայաստանի և Ադրբեջանի միջև սկսվեց երկարատև «հիբրիդային» պատերազմ վիճելի տարածքներին՝ Ղարաբաղին, Զանգեզուրին և Նախիջեւանին տիրելու համար, որն ուղեկցվեց դաժանագույն էթնիկական զտումներով և մասամբ ընդմիջարկվեց միայն երկու հանրապետությունների անկմամբ: Այդ բախումների ընթացքում բրիտանական զինված ուժերի հրամանատարությունը, որի վրա դրված էր Արևելյան Միջերկրածովյան շրջանի վրա հսկողության իրականացումը (Օսմանյան կայսրության նախկին տարածքներ, Կովկաս և Հյուսիսային Մերձսևծովյան շրջան) **«օբյեկտիվ և ազնիվ միջնորդի» դերի** ստանձնումը, փաստացի կանգնեցին նավթով հարուստ Ադրբեջանի կողքին՝ մասնավորապես՝ Ղարաբաղյան հարցը վճռելով վերջինիս օգտին»[1]: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որի արմատները որոշ ընդմիջումներով գալիս են գրեթե 100-ամյա խորքից, կրկին դաժան լարվածության թեմա դարձավ 2020 թ. աշնանը՝ միաժամանակ ծեռք բերելով լարվածության նոր գուներանգներ և առանձնահատկություններ.*

1) ակտիվ բախման մեջ ներգրավվեց Թուրքիան, այդ թվում և էլիտար թուրքական հատուկ զորքը, որը արհեստավարժվել էր քրդերի դեմ պատժիչ գործողություններում՝ վայելելով ՆԱՏՕ-ի թողտվությունը,

*2) հանկարծակի էր Ռուսաստանի նոր դիրքորոշումը, որը բացահայտ իրենից վանեց, հեռացրեց Հայաստանին, և ի տարբերություն 1991-1994 թթ. պատերազմի, երբ ղարաբաղյան հարցում ինչ-ինչ հարցերում նպաստեց հայկական կողմին: 2020 թ. էական ոչ մի աջակցություն չցուցաբերեց Հայաստանին առկա «բարեկամական» դաշինքի շրջանակներում, և անգամ ընդհակառակը՝ բացահայտ աջակցեց Ադրբեջանին, իսկ Մոսկովյան Կրեմլի գլխավոր քարոզիչները ոչ երկիմաստ ղարաբաղյան բախման մեղքը բարդեցին Հայաստանի Հանրապետության վրա, պնդելով, որ Ադրբեջանը ընդամենը «**ազատագրել է իր օրինական տարածքները**»: Արդյունքում՝ եղավ այն, ինչ արեցին Դաշնակից եվրոպական-անտանտյան տերությունները 1918-1920 թթ., հաճույքով օգտագործելով հայ ժողովրդի մարդկային և այլ ռեսուրսները ռազմական ժամանակ, սկսեցին դիտարկել փոքրիկ, սակայն բնական մեծ ռեսուրսներով հարուստ Հայաստանը որպես ցավալի թյուրիմացություն և դժվար վճռելի խնդիրների աղբյուր՝ ամենևին էլ չշտապելով և չցանկանալով բավարարել նրա տարածքային արդար պահանջները՝ անգամ կասկածի ենթարկելով նրա անկախ պետականության գոյության հարցը:*

[1] Andersen A., Partskhaladze G., Новый виток Карабахского конфликта в контексте армяно-российских отношений. October 10, 2020, https://www.academia.edu/44305785/, դիտումը՝16.12.2021: Վիրաբյան Վ., 2021, N 2, 72:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Աշխատավոր». Թիֆլիս. 1919. 17 ապրիլի:
2. Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երևան, «Հայաստան» հրատ., 1999, 730 էջ.
3. Լանգ Դ. Մ., Ուոքըր Ք. Զ., Հայերը: (Հայ ժողովրդի պատմություն), Երևան, «Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն», 1992, 84 էջ:
4. Լեո, Անցյալից. Հուշագրություն. Երևան. «Շեմ» հրատ. 2009. 428 էջ.
5. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ. տպ. Համազգայինի, 1968, 487 էջ:
6. Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին, 6 ապրիլի-22 ապրիլի 1920 թ.// «Բանբեր Հայաստանի արխիվների», 1996, № 1. (98), էջ 71-88:
7. Հարությունյան Հ. Մ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ.,Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1996. 299 էջ.
8. Հայաստանի Ազգային արխիվ (այնուհետև՝ ՀԱԱ), Ֆոնդ 199. Ցուցակ 1.Գործ 6. Թերթ 9.
9. ՀԱԱ, Ֆոնդ 199, Ցուցակ 1, Գործ 43, Թերթ 59.
10. ՀԱԱ, Ֆոնդ 199, Ցուցակ 1, Գործ 28, Թերթ 86-87.
11. ՀԱԱ, Ֆոնդ 278, Ցուցակ 1, Գործ 321, Թերթ 397.
12. ՀԱԱ, Ֆոնդ 200, Ցուցակ 1, Գործ 563, Թերթ 62.
13. ՀԱԱ, Ֆոնդ 200, Ցուցակ 1, Գործ 548, Թերթ 158-180.
14. ՀԱԱ, Ֆոնդ 200, Ցուցակ 1, Գործ 516, Թերթ 44-45.
15. ՀԱԱ, Ֆոնդ 200, Ցուցակ 1, Գործ 576, Թերթ 4-9:
16. «Հայաստանի աշխատավոր», Երևան. 1919. 17 հուլիսի.
17. Հովհաննիսյան Ռ. Գ. Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին Տարի:1918 -1919, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2005, 604 էջ:
18. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, հատոր II. Վերսալից--Լոնդոն. 1919-1920. Երևան. «Տիգրան Մեծ հրատ. 2014, 708 էջ.
19. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Հատոր III, Լոնդոնից-Սևր. փետրվար-օգոստոս, 1920, Երևան, Տիգրան Մեծ» հրատ., 2015, 628 էջ:
20. «Մշակ», 1920, 4 ապրիլի, Թիֆլիս:
21. «Նոր աշխատավոր», 1919, 1 սեպտեմբերի, Թիֆլիս.
22. Սարուր [Ասուր], Ղարաբաղի կցումը Ադրբեջանի, «Հայրենիք» ամսագիր, հատոր VIII, Բոստոն, Հունիս, 1929. էջ 128-147:
23. Վիրաբյան Վ., Հայաստանը Անդրկովկասյան Հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում, Երևան, «Ասողիկ» հրատ. , 2004, 44 էջ:
24. Վիրաբյան Վ.,2021, Ազգամիջյան զարգացումները և Անտանտի պետությունները Անդրկովկասում 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, «Պատմություն և Մշակույթ», Հայագիտական Հանդես, Երևան, N 2, 65-82:
25. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երկրորդ տպագրութիւն. Բէյրութ, տպարան «Մշակ». 1958. 684 էջ.
26. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան»

հրատ.1993, 704 էջ.
27. «Азербайджан». Баку. 1919. 24 августа. № 179.
28. Азербайджанская Демократическая Республика. Внешняя политика. (Документы и материалы). Баку. Издательство «Азербайджан».1998. 632 С.
29. Ахмедова Ф. Вопрос статуса Нагорного Карабаха: История и Современность: //"Карабах вчера. сегодня и завтра". Материалы научно-практических конференций. Вторая ча(In Armenian)сть. Баку. ООК (Организация Освобождения Карабаха). 2009. с. 172-178 [197].
30. Ваал де Т. Черный сад. Армения и Азербайджан между миром и войной. Пер. с англ. О. Алякринского. Москва. Издательство «Текст». 2005. 415 С.
31. Векилов Р. А. История возникновения Азербайджанской Республики. Баку. Изд-во "Элм". 1998. 68 с.
32. Исторический цикл. Миротворцы | Esse.am: Aug 2, 2021 Տես https: //www. esse. am/2021/08/02/istoricheskij-cikl-mirotvorcy/: Դիտման օրը 5.10.2021 թ.
33. Наджафов Б. Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце XIX - начале XX века. часть II. Баку. Издательство «Шарг-Гарб». 1994. 336 с.
34. Пилипчук Яр. В. Азербайджанское государство в контексте русско-турецких отношений.//South Caucasia In The Context Of Social, Economic And Political Progress In The Post-Cold War Era, Editors Assoc. Prof. Dr. Vefa Kurban Assoc. Prof. Dr. Muvaffak Duranli, Ankara / Turkey, 2021, с. 105-187 [355 с.]:
35. Туманян М. Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг. Ереван. Национальный Архив Армении. 2012, 473 с.
36. Andersen A., Partskhaladze G., 2020, Новый виток Карабахского конфликта в контексте Армяно-Российских отношений. October 10, տե՛ս https://www.academia.edu/44305785/, դիտումը՝ 16.12.2021:
37. Isgenderli A. Realities of Azerbbaijan. 1917-1920. USA. Washington. Xibris corporation. Library of Congress US. 2011. 234 p.
38. Hasanli J. Foreign Policy of the Republic of Azerbajdan: The Difficult Road to Western Integration. London-New-York. Routledge Taylor Francis Group. 2016. 456 p.
39. Virabyan Vanik, Revealing The Khan Tekinsky Conspiracy (from the history of counter intelligence of the First Republic of Armenia), «Fundamental Amenology» (Electronical Journal) № 1 (13) 2021, pp. 51-81:
40. https://en.wikipedia.org/wiki/ Digby_ Shuttleworth: //https://en.wikipedia.org/wiki/ Digby_ Shuttleworth: Դիտման օրը. 5.10.2021.
41. Digby Shuttleworth:// https://military-history.fandom.com/wiki/Digby_Shuttleworth: Դիտման օրը.5.10.2021.
42. British General Digby Shuttleworth.// https:// Peoplepill.Com/People/Digby-Shuttleworth: Anar Isgenderli, Justin McCarthy. Դիտման օրը. 5.10.2021.

REFERENCES

1. «Ashatavor». 1919. 17 aprili. Tiflis (In Armenian). (In Armenian)
2. «Azerbaidjan». Baku. 1919. 24 avgusti. № 179 (In Russian).
3. *Azerbaidjanskaya Demokraticheskaya Respublika.* Vneshnaya politika. (Dokumenti I materiali), Baku. Izdatelstvo «Azerbaidjan». 1998, 632 s. (In Russian)
4. *Axmedova F.* Vopros statusa Nagornogo Karabaxa: Istoriya I sovremennosth: //"Karabax vchera, segodnya i zavtra". Materiali naushno-prakticheskix konferencii. Vtoraya chast. Baku. OOK (Organizaciya Osvobojdeniya Karabaxa). 2009. s. 172-178 [197]. (In Russian)
5. *Isxanean E.* Lernain Karabax. 1917-1920, Yerevan. «Hayastan» hrat. 1999. 730 ej.
6. *Hasanli J.* Foreign Policy of the Republic of Azerbajdan: The Difficult Road to Western Integration, London and New-York, Routledge Taylor Francis Group. 2016. 456 p. (In English)
7. *Isgenderli A.* Realities of Azerbaijan. 1917-1920, USA, Washington, Xibris corporation. Library of Congress US, 2011, 234 p. (In English)
8. *Istoricheski cikl.* Mirotvorci. | Esse.am: Aug 2, 2021 Տես https: //www. esse. am/2021/08/02/istoricheskij-cikl-mirotvorcy/: Ditman ory 5.10.2021. (In Russian)
9. Hayastani Azgain Archive (HAA). Fond 199. Cucak 1. Gorc 6. Tert 9. (In Armenian, Russian, English)
10. Hayastani Azgain Archive (HAA). Fond 199. Cucak 1. Gorc 43.Tert 59.
11. Hayastani Azgain Archive (HAA). Fond 199. Cucak 1. Gorc 28.Tert 86-87.
12. Hayastani Azgain Archive (HAA). Fond 278. Cucak 1. Gorc 321.Tert 397.
13. Hayastani Azgain Archive (HAA). Fond 200. Cucak 1. Gorc 563.Tert 62.
14. Hayastani Azgain Archive (HAA). Fond 200. Cucak 1. Gorc 548. Tert 158-180.
15. Hayastani Azgain Archive (HAA). Fond 200. Cucak 1. Gorc 516.Tert 44-45.
16. Hayastani Azgain Archive (HAA). Fond 200. Cucak 1. Gorc 576. Tert 4-9: (In Armenian, Russian, English)
17. «Hayastani ashatavor». 1919. 17 yulisiji.Yerevan. (In Armenian)
18. Hamo Ohanjanyani namaknery Aleqsandr *Khatisyan*. 6 aprili -22 aprili.1920 t. // «Banber Hayastani archivneri». 1996. № 1. (98). ej 71-88.
19. *Harutyunyan H. M.* Lernain Karabaxy 1918-1921 tt. Yervan, HH GAA hrat.1996, 299 ej: (In Armenian)
20. *Hovhannisyan R. G.* Hayastani Hanrapetutyun: Hator I, Arajin Tari. 1918-1919. Yerevan. «Tigran Mec» hrat. 2005. 604 ej: (In Armenian)
21. *Hovhannisyan R. G.* Hayastani Hanrapetutyun. Hator II. Versalis-London. 1919-1920, Yerevan. «Tigran Mec» hrat. 2014. 708 ej. (In Armenian)
22. *Hovhannisyan R. G.* Hayastani Hanrapetutyun. Hator III. Londonic Sevr. Petrvar-ogostos. 1920. Yerevan. «Tigran Mec» hrat. Երևան. 2015. 628 ej. (In Armenian)
23. *Khatisean Al.* Hayastani Hanrapetutean cagumn u zargacumy. Bejrut «Hamazgaini. 1968. 487 ej. (In Armenian)
24. *Lang D. M. Uoqyr Q. J.* Haiery: (Hai jogovrdi patmutyun). Yerevan. «Haikakan hanragitarani glxavor xmbagrutyun». 1992. 84 ej. (In Armenian)

25. *Leo,* Ancialic. Hushagrutyn. Yerevan. Shem hratar.2009. 428 ej.(In Armenian)
26. «Mshak». 1920. 4 aprilli.Tiflis. (In Armenian)
27. *Nadjafov B.* Lico vraga. Istoriya armyanskogo nacionalizma v Zakavkazye v konce XIX – nachale XX veka. Chast II. Baku, Izdatelsrvo. «Sharg-Garb». 1994. 336 s. (In Russian)
28. «Nor ashatavor». 1919. 1 septemberi. Tiflis. (In Armenian)
29. *Pilipchuk Yar V.* Azerbaydjannskoe gosudarstvo v kontekste russko-tureckix otnoshenii.// South Caucasia In The Context Of Social, Economic And Political Progress In The Post-Cold War Era, Editors Assoc. Prof. Dr. Vefa Kurban Assoc. Prof. Dr. Muvaffak Duranli, Ankara / Turkey, 2021, s. 105-187 [355 s.]. (In Russian)
30. *Sarur [Asur].* Karabaxi kcumy Adrbejani. «Hayreniq» amsagir. HatorVIII. Boston. Hunis. 1929. ej 128-147.
31. *Tumanyan M.* Diplomaticheskaya istoriya Respubliki Armeniya 1918-1920 gg. Yerevan. Nacionalni arxiv Armenii. 2012. 473 s.(In Russian)
32. *Veqilov R. A.* Istoriya vozniknoveniya Azerbaydjanskiy Respubliki. Baku. Izd-vo "Elm". 1998. 68 s. (In Russian)
33. *Virabyan V.* Hayastany Andrkovkasyan Hanrapetutyunneri 1920 t. Aprilyan vehajogovum, Yerevan. «Asogik» hrat. 2004. 44 ej. (In Armenian)
34. Virabyan Vanik, Revealing The Khan Tekinsky Conspiracy (from the history of counter intelligence of the First Republic of Armenia), «Fundamental Amenology» (Electronical Journal) № 1 (13) 2021, pp. 51-81: (In English)
35. Virabyan V.,2021, Azgamijyan zargacumnery ev Antanti petutyunnery Andrkovkasum 1917 t. Hoktemberyan hegashrjumic heto, «Patmutyun ev Mshakuyt». Hayagitakan handes, Erevan, N 2, 65-82 (In Armenian)
36. *Vracean S.* Hayastani Hanrapetutiun. Erkrord tpagrutyun. Beyrut, tparan «Mshak». 1958. 684 ej. (In Armenian)
37. *Vracyan S.* Hayastani Hanrapetutyun. Yerevan. Hayastan hrat. 1993. 704 ej. (In Armenian)
38. Andersen A., Partskhaladze G., 2020, Noviy vitok Karabaxskogo konflikta v kontekste Armyano- Rossiyskix otnosheniy. October 10, unէ՛u https://www.academia.edu/44305785/, ditumy՝ 16.12.2021: (In Russian)
39. *Waal de T.* Chernii sad. Armenia I Azerbaydjan mejdu mirom I voynoy. Moskva, izdatelstvo «Tekst». 2005. 415 s. (In Russian)
40. https://en.wikipedia.org/wiki/Digby_Shuttleworth: //https://en.wikipedia.org/wiki/ Digby _ Shuttleworth: Ditmann ory. 5.10.2021.
41. Digby Shuttleworth:// https://military-history.fandom.com/wiki/Digby_Shuttleworth: Ditmann ory. 5.10.2021.
42. British General Digby Shuttleworth.// https:// Peoplepill.Com/People/Digby-Shuttleworth: Anar Isgenderli, Justin McCarthy. 5.10.2021.

РЕЗЮМЕ

Нагорный Карабах в контексте армяно-азербайджанского территориального противоборства и деятельности военно-политического представительства Великобритании в Закавказье 1918-1920 гг.

Ваник Вирабян

Армянский Государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна
Кафедра истории Армении, Факультет истории и социальных наук, доктор исторических наук, профессор
Ереван, Республика Армения
vanik.virabyan@mail.ru

Ключевые слова: Республика Армения, Карабах-Арцах, Азербайджан, Россия, Англия-Великобритания, Баку.

В 1918-1920 гг. военно-политическая стратегия Азербайджана ставила своей целью подорвать армянскую государственность, для чего все силы были направлены на отторжение исконно армянских территорий от Республики Армения. С этой целью и с помощью британских генералов У.Томсона и Д. Шателворта из Карабаха были отодвинуты сили Дро и Андраника, что позволило азербайджанским властям, так называемым обманчивым **«согласительным»** актом от 22 августа 1919 г., принудить Армянский Совет Карабаха временно подчиниться власти Азербайджана до справедливого разрешения спорного вопроса Парижской конференцией союзников, что в конечном счете было обдуманным хитрым маневром со стороны азербайджанского правительства. В конечном итоге, в силу происшедших в дальнейшем важных изменений в военно-политической ситуации в регионе вокруг Республики Армения, взаимовыгодного согласия между большевистской Россией и кемалистской Турцией, но также и явного попустительства союзных держав, Азербайджану удалось на историческом промежуке 1920-1921 гг. захватить не только Нахичевань, а также Нагорный Карабах и другие армянские земли, борьба за которых вновь возобновилась в 1988-1990-2020- годах.

SUMMARY

Mountainous Karabakh in the Context of Armenian-Azeri Territorial Conflict and the Activities of Military-Political Representation of Great Britain in Transcaucasus in 1918-1920

Vanik Virabyan

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Chair of Armenian History, Faculty of History and Social Sciences, Doctor of Historical Sciences, Professor
Yerevan, Republic of Armenia
vanik.virabyan@mail.ru

Keywords: Republic of Armenia, Карабах-Арцах Azerbaijan, Russia, England-Great Britain, Baku.

In 1918-20s the steps of military politics of Azerbaijani were directed towards the frustration of Armenian State system. With this intention, Andranik’s and Dro’s forces were taken out, with the help of British generals Thomson and Shatelworth. This allowed Azerbaijani families on the

22 of August in 1912 make the Armenian council In Karabagh temporarily obey Azerbaijani Government till the solution of this disputable issue by the French conference of allied union, which was one of the beforehand planned cunning steps of Azerbaijani government.

In reality, as a result of later important military changes in the Republic of Armenia and as a result of mutually beneficial agreement between Russian and Kemal Turkey as well as taking into consideration the evident connivance of allied powers during 1920-23 Azerbaijan managed to capture not only Nachijevan, but Karabagh and other Armenian lands, as well, the struggle for which restarted in 1988-1990-2020.